ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԱԲՀ-ԳՀԾՁԲ-19/08» ծածկագրով գնանշման հարցումով Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար անվտանգության եվ պահնորդական ծառայություններ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Աբովյան

17/01/2019թ.
ժամը 10:0 0

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գուլոյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ջ. Սարգսյանը,Ա. Չոբանյանը, Լ. Շառաջյանը, Վ. Օհանյանը
Քարտուղար՝ Ս. Աղաջանյանը

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-19/08» ծածկագրով Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցումով գնման ընթացակարգի բացման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

1. «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-19/08» ծածկագրով գնանշման հարցումով ընթացակարգի հայտերի բացման մասին
Մ. Գուլոյան

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով 2019 թվականի հունվարի 17-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-19-08» ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին
Մ. Գուլոյան

2.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	**Մասնակիցների անվանումը**
1	ՍԱՌԳԱՌԴ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ՍՊԸ
2	ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների մասին
Մ. Գուլոյան

ՀՀ դրամ

Հ/հ	Զբաղեցրած տեղ	Մասնակցի անվանումը	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝			Նախահաշվային գին
			Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը*	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը	
1	1	ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ	3 960 000	-	3 960 000	4 400 000
1	-	ՍԱՌԳԱՌԴ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ՍՊԸ	5 440 000	-	5 440 000	

*Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

4. Տվյալներ մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին
Մ. Գուլոյան

4.1 «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4.2 «ՍԱՌԳԱՌԴ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ստորագրված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

4.3 «ՍԱՌԳԱՌԴ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկըգերազանցում է նախահաշվային գինը:

4.4 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 40-րդ կետով՝ որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից և մերժել «ՍԱՌԳԱՌԴ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին
(Մ. Գուլոյան)

5.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 5.1 կետում նշված փաստաթղթի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Աբովյանի համայնքապետարան, Բարեկամության հր. 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝		Մ. Գուլոյան
Անդամներ՝		Ջ. Սարգսյան
		Ա. Չոբանյան
		Լ. Շառաջյան
		Վ. Օհանյան
Համակարգող		Ս. Աղաջանյան